

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՄՕՐՍ ԱՂՕԹՔԸ**

Կարծես երէկ էր դեռ, կը յիշեմ մօրս աղօթելը,
 Ես եւ եղբայրս՝ Յովհաննէս, դեռ փոքր երեխայ,
 Զէինք գիտեր ինչ կ'ըսէր կանգնած կամ ծնկաչոք,
 Կը փսփսար բազկատարած եւ ամիսը միացած:

Ութ անդամներու մայր էր՝ առանց օգնականի,
 Առտու կանուխ կ'արթննար կերակրելու մեզ.
 Ամառ թէ ձմեռ նոյն էր մեր մայրն իր գործով,
 Կը լուար, կը լոգցնէր, կը կարէր ու կ'աղօթէր:

Դժուար էր ամէն ինչ մօրս համար,
 Զուր չկար՝ առուէն կը բերէին եղբայրներս,
 Անհրաժեշտ էր խնայել, վատնել չէր կարելի,
 Լոգանքի ջուրով կը լուար տան բակը մեր:

Մայրս Թագուհի՝ բծախնդիր ու մաքրասէր,
 Կ'ընէր իր գործը, երբեմն ալ թաց աչքերով,
 Կ'երգէր երգեր վաղեմի ու մեղամաղձոտ,
 Ու կը զգար, կ'ապրէր հին օրերը Խարբերդի:

Շաբաթ օր, դժուար ու ծանր օր լուացքի,
 Կը խաշէր լուացքը ու կը լուար ձեռքով,
 Կու տար զանոնք ինծի որ ես փռեմ թելին.
 Այսպէ՛ս, սիրով կ'օգնէի մօրս՝ մօտը կեցած:

Յոգնած ու ծանր օրերուն ճաշը պարզ էր,
 Հա՛յտէ ձագս, Պետրոս, կը ձայնէր մայրս,
 Վառէ փափոռը, ջուրը դիր վրան որ եռայ.
 Կը սիրէի, պուլղուր փիլաւ պիտի եփէինք:

Աշնան կը լուար բուրդերը բոլոր.
 Կը պատրաստէր տան պաշարը ձմրան,
 Կծու պիպէռի փոշին ու պաստեղը,
 Կը շորցնէր սմբուկ եւ դդում:

Առաւօտ կը խաշակնքէր՝ դուռը բանալուն,
 «Հայր մեր» մը կ'ըսէր երբ շաղէր խմոր,
 Կը դրոշմէր վրան խաշանիչ՝ փառք տալով,
 Որ ըլլար մեր հացը օրհնուած ու չպակսէր:

Առաւօտ, իրիկուն, կար ժամանակ աղօթքի.
 Կը կանչէր մեզ՝ Յովհաննէ՛ս, Պետրո՛ս, եկէ՛ք,
 Կանգնէ՛ք մօտս, սորվէ՛ք աղօթել Աստուծոյ,
 Կը հետեւէինք ու «Հայր մեր»-ը կը կրկնէինք:

Շուտով միացանք երգչախումբին եկեղեցւոյ.
Ամէն կիրակի մաս կը բերէինք տնեցիներուն,
Երբ, ցաւ ի սիրտ, չէին կրնար միանալ մեզի,
Ահա այսպէս թրծեց մեզ մայրը մեր սիրելի:

Անգամներ, յատուկ կ'աղօթէր գլխիս վրայ,
Երբ կը տեսնէր լուսինը նորած երկնքի վրայ.
Կը յուսար եւ կը յուսադրէր զաւակներն իր,
Որ մեծնան ու զօրանան եւ շման անտէր:

Երբ դեռ տունն էի, յաճախ կը նեղանար,
Կ'ըսէր՝ հանգիստ թող զիս, գնա՛, խաղցիր.
Նման չէի ես եղբօրս, չէի ուզեր հեռանալ,
Ուրախ էի իր մօտ, նման հաւու ձագերուն:

Ունէինք պարզունակ եւ արթուն մայր,
Կը սաստէր մեզ նայուածքով իր խիստ,
Նման ուղղութեան փայտին Սուրբ Գրքի՝
Ձէր հանդուրժեր փողոցային վարմունքի:

Մայրս չկրցաւ աւարտել մանկապարտէզ,
Տառերը մեր հայկեան չէր իմանար լաւ,
Կմկմալով կը կարդար Սուրբ Գիրքը միշտ,
Կ'ըսէր՝ տեսէք ինչ լաւ բաներ կան մէջը:

Ուրախութեան եւ արցունքի օր մըն էր,
Երբ դեռ ժառանգաւոր սան էի Սաղէմի,
Ձեռքս տուին մօրս առաջին նամակը,
Կարծես ինքն էր կմկմալով կարդացողը:

Իր սիրուն ձայնն էր որ կու գար ականջիս,
Խրատական, օրհնութեան խօսքերով իր.
Կ'ըսէր, տղաս, քեզ համար գրել սորվեցայ.
Իմացի՛ր, ուր սէր՝ այնտեղ կայ մեծ կարօտ:

Մօրս աղօթքը բերաւ զիս այս Սուրբ Երկիր
Ու մինչեւ այսօր կը զգամ շունչը աղօթքին իր,
Ձի թափանցող է զօրութիւնը իրաւ աղօթքին,
Որ կը մխիթարէ, կը զօրացնէ ու կը յուսադրէ:

ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎՐԴ.

(Հոկտեմբեր, 2019)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ԵՐԱՆԻ ՁԵՁ**

Կեանքի ոլորտներուն մէջ որոնող
Գիտակն ու անգէտը միասնաբար,
Յոգնած կը խարխափէին յաւէտ՝
Գտնել անդորրութիւն մ'սփոփիչ:

Համատարած շարն իր հմայքով
Կործանած էր մարդն հոգեւոր
Ու զրկած հոգիի թարմութենէն,
Որ կը սպասէր կեանքի օրհասին:

Սիրոյ գութ Տէրն զրկեց Որդին
Ըլլալու ճանապարհ յուսատու՝
Հաստատ ուղեցոյց մարդկանց,
Գտնելու իրենց իրաւ հանգիստ:

Տարբեր մարդ էր Ան՝ առինքնող,
Որ կը խօսէր բոլորին անխտիր,
Կ'անուշցնէր սրտերն ընկճուած՝
Մխիթարելով սրտերն սգաւոր:

Տիրող ու գամող ձայնովն սուր
Կը պատգամէր «Երանի»-ներ,
Որ կը համակէր ի լուր լսելեաց
Արթնցնելով մարդն իր թմբիրէն:

Յանկարծ ահա շողացին աչքեր
Աղքատ ու ծուարած մարդկանց,
Երբ լսեցին տիրական խօսքը,
Թէ ժառանգ են արքայութեան:

Լերան գագաթին կանգնած վեհ,
Կը խօսէր մատնացոյց բոլորին՝
Լքուածին, հեզին ու անզօրին,
Զօրացած պիտ' տիրեն երկրին:

Օրէնսդիր մ'էր Ան հրամայող,
Արդարասէր ու ճշմարտասէր,
Պաշտպան զուրկին, անօթիին,
Որ պիտ' ունենան ու կշտանան:

Տուողն ստեղծիչ բարութեանց,
Չանտեսեր ունեւորին արթուն,
Տալու անոր որ չպակսի ինչքն իր,
Երբ տայ նուազ բարեբախտին:

Ականատես քարոզիչն մարդոց
Կը խօսէր Հօր Աստուծոյ մասին՝
Միշտ գթած, ողորմած բոլորին,
Որ եկաւ աւետելու կամքը Անոր:

Այսպէ՛ս, Ան կը խթանէր բոլորին
Ըլլալ ցանկացող իր Հօր տեսքին
Սիրոյ հոգատարին՝ Աստուծոյն,
Երեւելի միայն մաքուր սրտերու:

Աշխարհն այս փոթորկոտ, կ'ըսէր,
Ներքին մարդն է ձեր գործունեաց,
Փոխուէ՛ք ու եղէ՛ք խաղաղասէր,
Ըլլալու միշտ որդիներ Աստուծոյ:

Չարն է անաստուած ժամավաճառ,
Հետապնդող իրաւ արդարասէրին.
Երանի է ձեզ, ո՛վ արդարասէրներ,
Զի ձերն է Հօրս թագաւորութիւն:

Անգութ սատանան կը հրճուի միշտ,
Երբ կ'ամբաստանուիք ինձ համար,
Յնծացէք, անզօր է ան իր սաստով,
Եւ դուք պիտ' ստանաք վարձքը ձեր:

Կեանքը յոյժ նման է ալեկոծ ծովու,
Ուսանիր լողալ նաւապետէն բարի
Ու մնացիր մէջն անոր սահմանին,
Զի նա է քո զօրութիւն եւ ապաւէն:

ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎՐԳ.

(Հոկտեմբեր, 2020)